ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

ԹԻՎ 99-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 18-Ի ԹԻՎ 18-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2023 թվականի հուլիսի 18-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության վարչությունների կանոնադրությունները հաստատելու մասին» թիվ 18-Լ հրամանում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) հրամանի 1-ին կետում լրացնել հետևյալ բովանդակությամբ 16-րդ ենթակետ.

«16) Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության հանցավորության վիճակագրության և հետազոտական կենտրոնի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 16-ի:»

2) ուժը կորցրած ճանաչել հրամանի 1-ին կետով հաստատված 11-րդ հավելվածի 19-րդ կետի 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ և 7-րդ ենթակետերը.

3) հրամանը լրացնել նոր՝ 16-րդ հավելվածով՝ ըստ հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հունվարի 20-ից:

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ
26.12.2025թ.
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
Հայաստանի Հանրապետության ներքին
գործերի նախարարի 2025 թվականի
դեկտեմբերի 26-ի թիվ 99 - Լ հրամանի

«Հավելված 16
Հայաստանի Հանրապետության ներքին
գործերի նախարարի 2023 թվականի
հուլիսի 18-ի թիվ 18 - Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) հանցավորության վիճակագրության և հետազոտական կենտրոնը (այսուհետ՝ Կենտրոն), որը գործում է վարչության կարգավիճակով, Նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է, որն իր իրավասության շրջանակներում ապահովում է հանրապետական մակարդակով հանցավորության և վարչական իրավախախտումների, ինչպես նաև դրանք կատարած անձանց վերաբերյալ հաշվառումների վարումը, համապարփակ վիճակագրության ձևավորումը և հանցավորության իրավիճակի, կառուցվածքի, շարժընթացի, օրինաչափությունների, ինչպես նաև հանցավորությանը և վարչական իրավախախտումներին առնչվող այլ պարբերական և թեմատիկ քրեաբանական վերլուծությունների ու հետազոտությունների իրականացումը:

2. Կենտրոնն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, այլ օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով, այլ իրավական ակտերով, ինչպես նաև Նախարարության և սույն կանոնադրություններով:

3.Կենտրոնն իր իրավասության շրջանակում վիճակագրության վարումը ու հետազոտական գործունեությունը իրականացնում է հետևյալ սկզբունքների հիման վրա՝

1) օբյեկտիվություն և անաչառություն.
2) վերլուծական և մեթոդաբանական մասնագիտական անկախություն.
3) գիտական և մեթոդաբանական հիմնավորվածություն.
4) տվյալների որակ, ամբողջականություն և հուսալիություն.
5) տվյալների համադրելիություն ժամանակի և տարածության մեջ.
6) կիրառվող մեթոդաբանությունների թափանցիկություն.
7) վիճակագրական գաղտնիքի և անձնական տվյալների պաշտպանության ապահովում:

4. Կենտրոնն իր գործունեությունն իրականացնում է Նախարարության մյուս կառուցվածքային ստորաբաժանումների, Նախարարությանը ենթակա մարմինների և կազմակերպությունների, ինչպես նաև այլ պետական մարմինների, այդ թվում՝ պետական վիճակագրության ոլորտում լիազորված մարմնի, իրավապահ և դատական իշխանության մարմինների հետ համագործակցելով:

5. Կենտրոնը կարող է համագործակցել կրթական և գիտահետազոտական, ինչպես նաև

միջազգային կազմակերպությունների հետ:

6. Կենտրոնն իր իրավասության շրջանակում Նախարարության մյուս կառուցվածքային ստորաբաժանումներից, Նախարարությանը ենթակա մարմիններից և կազմակերպություններից, այլ պետական մարմիններից պահանջում և ստանում է հանցագործությունների և վարչական իրավախախտումների, դրանք կատարած անձանց, պատասխանատվության միջոցների ու փուլերի մասին, ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսված այլ անհրաժեշտ տեղեկատվություն ու վերաբերելի տվյալներ: Ստացված տվյալների համակարգման, վերլուծության ու հետազոտական աշխատանքների արդյունքները՝ գործնականում կիրառելի առաջարկություններով, Կենտրոնը տրամադրում է գործընթացում ներգրավված բոլոր իրավասու մարմիններին՝ տարբեր փուլերում իրենց գործունեության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով:

7. Կենտրոնն իր իրավասության շրջանակում ինքնուրույն է իրականացնում վերլուծական, վիճակագրական և հետազոտական աշխատանքները՝ ապահովելով կիրառվող հետազոտական մեթոդների, չափանիշների, տվյալների մշակման եղանակների և ստացված արդյունքների մասնագիտական անկախությունը, օբյեկտիվությունն ու անաչառությունը:

8. Կենտրոնի կողմից իրականացվող հետազոտությունների ուղղությունները, թեմաները և հետազոտական հարցերը կարող են առաջարկվել Նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների, Նախարարությանը ենթակա մարմինների, ինչպես նաև ոլորտի իրավասու այլ պետական մարմինների կողմից:

9. Կենտրոնն ունի տարեկան ծրագիր (այսուհետ՝ Ծրագիր), որը յուրաքանչյուր տարվա համար դրան նախորդող տարվա դեկտեմբեր ամսվա ընթացքում ներկայացվում է Նախարարի հաստատմանը:

10. Ծրագիրը ներառում է տարվա ընթացքում կատարման ենթակա նվազագույն վերլուծությունների ու հետազոտությունների ցանկը: Ծրագրում կարող են ներառվել նախարարության ենթակա մարմինների, կառուցվածքային ստորաբաժանումների, ինչպես նաև ոլորտի իրավասու այլ պետական մարմինների կողմից առաջարկված ուղղությունները ու թեմաները:

11. Հանցավորության կանխարգելման և հանցավորության դեմ պայքարի ոլորտում գործունեություն ծավալող բոլոր մարմինների, ըստ անհրաժեշտության՝ նաև այլ շահագրգիռ կողմերի հետ ոլորտի խնդիրները, առաջնահերթությունները, ինչպես նաև Կենտրոնի վերլուծությունները, հետազոտական նյութերն ու առաջարկությունները քննարկելու, համատեղ աշխատանքի արդյունավետությունը, ընթացքում առաջացած խնդիրները բացահայտելու ու լուծելու, համագործակցության ու տվյալների փոխանակման արդյունավետության բարձրացումը ապահովելու նպատակով Նախարարի հրամանով Կենտրոնին կից գործում է Հանցավորության կանխարգելման հարցերով խորհրդատվական խորհուրդը (այսուհետ՝ Խորհուրդ):

12. Խորհրդի կազմը ու գործունեության կարգը հաստատվում է Նախարարի հրամանով:

13. Կենտրոնի կառուցվածքում ընդգրկվում են Կենտրոնի պետը, Կենտրոնի պետի տեղակալը, Կենտրոնի բաժինները:

14. Կենտրոնը կարող է ունենալ իր անվանմամբ կլոր կնիք և անհատականացման միջոցներ:

2. ԿԵՆՏՐՈՆԻ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

15. Կենտրոնի նպատակներն են՝

1) Հայաստանի Հանրապետությունում հանցագործությունների, վարչական իրավախախտումների և դրանք կատարած անձանց, ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսված այլ միասնական պետական հաշվառումների իրականացումը, դրա հիման

վրա վիճակագրության արտադրությունը.

2) քրեաբանական վերլուծությունների և հետազոտությունների արդյունքների, քաղաքականության մշակման համար ուղղորդող նյութերի ու տեղեկատվության, ինչպես նաև հանցավորության կանխարգելման և դրա դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանն ուղղված առաջարկությունների տրամադրումը Նախարարությանը և այլ պետական մարմիններին՝ հանցավորության կանխարգելման ոլորտում ապացուցահեն քաղաքականություն մշակելու ու իրականացելու համար:

16. Կենտրոնի խնդիրներն են՝

1) հանցագործությունների, վարչական իրավախախտումների, դրանք կատարած անձանց, ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսված այլ տեղեկատվության վերաբերյալ տեղեկատվական շտեմարանների ձևավորումը.

2) քրեաբանական վերլուծությունների ու հետազոտությունների իրականացումը, այդ թվում՝ վերլուծական և արհեստական բանականության գործիքների կիրառմամբ.

3) Նախարարության, այլ պետական մարմինների իրազեկվածության ապահովումը հանցավորության վիճակի, կառուցվածքի, միտումների, օրինաչափությունների, հիմնական ռիսկերի, հանցավորության կանխարգելման և դրա դեմ պայքարի ուղղությամբ իրավապահ մարմինների աշխատանքի արդյունավետության, ինչպես նաև քրեաբանական վերլուծությունների ու հետազոտությունների արդյունքների վերաբերյալ՝ ներկայացնելով համապատասխան առաջարկություններ իրավասու սուբյեկտներին:

3. ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

17. Կենտրոնի աշխատանքների համակարգումը սահմանվում է Նախարարի որոշմամբ:

18. Կենտրոնի անմիջական ղեկավարումն իրականացնում է Կենտրոնի պետը:

19. Կենտրոնի պետը պատասխանատու է Կենտրոնի առջև դրված խնդիրների և Կենտրոնին վերապահված գործառույթների իրականացման համար:

20. Կենտրոնի պետը կարող է ձևավորել աշխատանքային խմբեր:

21. Կենտրոնի պետն անմիջական հաշվետու է Նախարարին:

22. Կենտրոնի գործառույթների իրականացմամբ ստեղծված փաստաթղթերը ստորագրում է Նախարարը:

23. Կենտրոնի գործառույթների իրականացմամբ ստեղծված փաստաթղթերը Կենտրոնի պետը կարող է ստորագրել անմիջական ղեկավարի հանձնարարությամբ կամ իրավական ակտերով սահմանված դեպքերում:

4. ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԻ ԲԱԺԻՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

24. Կենտրոնն ունի հետևյալ բաժինները՝

1) իրավախախտումների հաշվառման բաժին.

2) հետախուզումների հաշվառման բաժին.

3) վիճակագրության վերլուծության և հետազոտությունների բաժին.

4) նորարարության և ռազմավարական կանխատեսումների բաժին:

25. Կենտրոնի բաժիններն իրենց գործառույթներն իրականացնում են միմյանց հետ համագործակցելով:

26. Իրավախախտումների հաշվառման բաժինն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) միասնական հանրապետական հաշվառումների վարումը՝

ա. հանցագործությունների և դրանք կատարած անձանց.

բ. վարչական իրավախախտումների և դրանք կատարած անձանց.

գ. քրեական հետապնդման ենթարկված և դատապարտված անձանց.

2) հաշվառման ենթակա տվյալների ընդունումը, գրանցումը, համակարգումը, սկզբնական դասակարգումը և անհրաժեշտության դեպքում ոչ թվային եղանակով ստացված տեղեկատվության մուտքագրումը համապատասխան տեղեկատվական համակարգերում.

3) հաշվառման ներկայացված տվյալների իսկության, ամբողջականության ու սահմանված ձևաչափերին և կարգին համապատասխանության նկատմամբ հսկողության իրականացումը.

4) հաշվառման ենթակա տվյալների ճշգրտման, լրացման, վերանայման և թարմացման անհրաժեշտության ստուգումը և աշխատանքների իրականացումը.

5) հաշվառման ենթակա տվյալների պահպանության, արխիվացման և օրենքով սահմանված կարգով և դեպքերում ոչնչացման ապահովումը.

6) հաշվառման ենթակա տվյալների մուտքագրման, պահպանման և արխիվացման մեթոդաբանության մշակումը.

7) իրավասու մարմիններին, պաշտոնատար անձանց, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց օրենքով սահմանված դեպքերում ու կարգով հաշվառված տվյալների և հարցումներին պատասխանների տրամադրումը.

8) տվյալների շտեմարանների մշտադիտարկման իրականացումը՝ ուղղված սխալների և թերի տվյալների բացահայտմանը.

9) տարբեր տեղեկատվական աղբյուրներից ստացված տվյալների համադրելիության և համաչափության ապահովումը.

10) Կենտրոնի իրավասության ոլորտին առնչվող քննարկումներին, խորհրդակցություններին, միջոցառումներին և այլ աշխատանքային հանդիպումներին մասնակցության ապահովումը.

11) բաժնի գործառույթներին վերաբերելի կառավարչական բնույթի հրամանների, ցուցումների և այլ նախագծերի մշակումը և ներկայացումը հաստատման.

12) այլ իրավական ակտերով սահմանված գործառույթների իրականացումը:

27. Հետախուզումների հաշվառման բաժինն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) միասնական հանրապետական հաշվառումների վարումը՝

ա. հետախուզվող անձանց.

բ. անհայտ կորած անձանց, չճանաչված դիակների և իրենց ինքնության վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու ունակություն չունեցող անձանց.

գ. հափշտակված, կորած և (կամ) հայտնաբերված զենքի, զինամթերքի ու ռազմամթերքի.

դ. հափշտակված հնաոճ առարկաների և մշակութային արժեքների.

ե. հետախուզվող տրանսպորտային միջոցների.

զ. հանցագործությունների հետ կապված համարակալված փաստաթղթերի, իրերի և արժեթղթերի.

է. օպերատիվ հաշվառման գործերի և դրանցով անցնող անձանց.

ը. ոստիկանության հետ գաղտնի հիմունքներով աշխատող և համագործակցող անձանց.

թ. հատուկ հաշվառման և օպերատիվ արխիվային գործերի.

ժ. նախկին աշխատողների անձնական արխիվային գործերի.

2) հաշվառման ենթակա տվյալների ընդունումը, գրանցումը, համակարգումը, սկզբնական դասակարգումը և անհրաժեշտության դեպքում ոչ թվային եղանակով ստացված տեղեկատվության մուտքագրումը համապատասխան տեղեկատվական համակարգերում.

3) հաշվառման ներկայացված տվյալների իսկության, ամբողջականության ու սահմանված ձևաչափերին և կարգին համապատասխանության նկատմամբ հսկողության իրականացումը.

4) հաշվառման ենթակա տվյալների ճշգրտման, լրացման, վերանայման և թարմացման անհրաժեշտության ստուգումը և աշխատանքների իրականացումը.

5) հաշվառման ենթակա տվյալների պահպանության, արխիվացման և օրենքով սահմանված կարգով և դեպքերում ոչնչացման ապահովումը.

6) հաշվառման ենթակա տվյալների մուտքագրման, պահպանման և արխիվացման մեթոդաբանության մշակումը.

7) իրավասու մարմիններին, պաշտոնատար անձանց, ինչպես նաև իրավաբանական և ֆիզիկական անձանց օրենքով սահմանված դեպքերում ու կարգով հաշվառված տվյալների և հարցումներին պատասխանների տրամադրումը.

8) տվյալների շտեմարանների մշտադիտարկման իրականացումը՝ ուղղված սխալների և թերի տվյալների բացահայտմանը.

9) տարբեր տեղեկատվական աղբյուրներից ստացված տվյալների համադրելիության և համաչափության ապահովումը.

10) Կենտրոնի իրավասության ոլորտին առնչվող քննարկումներին, խորհրդակցություններին, միջոցառումներին և այլ աշխատանքային հանդիպումներին մասնակցության ապահովումը.

11) բաժնի գործառույթներին վերաբերելի կառավարչական բնույթի հրամանների, ցուցումների և այլ նախագծերի մշակումը և ներկայացումը հաստատման.

12) այլ իրավական ակտերով սահմանված գործառույթների իրականացումը:

28. Վիճակագրության վերլուծության և հետազոտությունների բաժինն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) հանցավորության և վարչական իրավախախտումների վերաբերյալ պաշտոնական վիճակագրության արտադրությունը.

2) պարբերական վիճակագրական հաշվետվությունների, տեղեկատվական բնույթի փաստաթղթերի, ամփոփ տեղեկանքների և թեմատիկ վիճակագրական ժողովածուների կազմումը ու դրանց տրամադրումը Նախարարության և Ոստիկանության ստորաբաժանումներին և իրավասու այլ պետական մարմիններին.

3) վիճակագրության և հաշվառված այլ տվյալների շարունակական, դինամիկ ու բազմաստիճան քրեաբանական վերլուծության ապահովումը՝ կիրառելով վերլուծական և արհեստական բանականության գործիքներ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության կամ առաջարկությունների հիման վրա թիրախային և թեմատիկ վերլուծությունների իրականացումը՝ հաշվի առնելով տարածքային, ժամանակային, ռիսկային խմբերի, հանցատեսակների և այլ համապատասխան դասակարգումները, ներառյալ՝ հանցավորության միտումների վերլուծությունը, ինչպես նաև հանցագործությունների աշխարհագրական քարտեզավորումն ու բարձր ռիսկայնության գոտիների հայտնաբերումը.

4) հարցումների անցկացումը, այդ թվում՝ զոհացման, դրանց արդյունքների ամփոփումը.

5) տեղեկատվության փոխանակման կազմակերպումը Նախարարության, Ոստիկանության կառուցվածքային ստորաբաժանումների և իրավասու այլ պետական

մարմինների հետ, ինչպես նաև վերջիններիս հետ տեղեկատվության փոխանակման արդյունավետության բարձրացման նպատակով համագործակցության ապահովումը.

6) իրավասու մարմիններին, պաշտոնատար անձանց, իրավաբանական և ֆիզիկական անձանց, ինչպես նաև միջազգային կազմակերպություններին վիճակագրական տեղեկատվության տրամադրում՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում ու կարգով.

7) օրենքով սահմանված դեպքերում օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների և միջազգային կազմակերպությունների հետ տեղեկատվության փոխանակման իրականացումը, այդ թվում՝ օտարերկրյա պետությունների իրավապահ մարմինների միջպետական ինֆորմացիոն բանկ հաշվառման ենթակա տեղեկատվության սահմանված ձևաչափով ու կարգով ներկայացումը, ինչպես նաև օտարերկրյա պետությունների իրավապահ մարմինների կողմից միջպետական ինֆորմացիոն բանկ ներկայացված տեղեկատվության սահմանված ձևաչափով ու կարգով հաշվառումը ու դրա տրամադրումը Նախարարության ու Ոստիկանության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներին և օրենքով նախատեսված դեպքերում՝ իրավասու այլ պետական մարմիններին.

8) քրեաբանական, սոցիոլոգիական, վիճակագրական և միջդիսցիպլինար հետազոտությունների կազմակերպումն ու իրականացումը՝ կիրառելով քանակական և որակական հետազոտական մեթոդաբանություններ, ինչպես նաև գիտական ուսումնասիրությունների համար սահմանված այլ ընդունված մեթոդներ.

9) հանցավորության կառուցվածքի, շարժընթացի, միտումների, տարածքային բաշխման, օրինաչափությունների, պատճառների, պայմանների ու նպաստող գործոնների ուսումնասիրությունը.

10) հանցավորության կանխարգելման և դրա դեմ պայքարի ոլորտում իրականացվող ծրագրերի և միջոցառումների ուսումնասիրումը, դրանց արդյունավետության գնահատումը ու բարելավման նպատակով առաջարկությունների ներկայացումը.

11) հանցավորության կանխարգելման և դրա դեմ պայքարի ոլորտին առնչվող իրավական ակտերի ու այլ նախագծերի ու առաջարկությունների ու ռազմավարական փաստաթղթերի ուսումնասիրումը, Կենտրոնի լիազորությունների շրջանակներում դրանց մշակման աշխատանքներին մասնակցության ապահովումը.

12) քաղաքականության մշակմանն ու որոշումների ընդունմանն աջակցող առաջարկությունների ու ուղղորդող նյութերի ներկայացումը Նախարարության և Ոստիկանության ստորաբաժանումներին և այլ պետական մարմիններին.

13) թեմատիկ, նպատակային և հանցավորության տարբեր դրսևորումների վերաբերյալ համալիր հետազոտությունների կազմակերպումն ու իրականացումը.

14) միջազգային լավագույն փորձի, առաջատար գիտական մոտեցումների ուսումնասիրումը, Կենտրոնի գործունեության հետ համեմատությունը ու համապատասխան բարելավումների ապահովումը.

15) Կենտրոնի կողմից իրականացվող հետազոտությունների մեթոդաբանական շրջանակի մշակումը և անընդհատ կատարելագործումը.

16) հետազոտական աշխատանքների հրապարակումը, արդյունքների հանրայնացումը՝ զեկույցների, վերլուծական հոդվածների, գիտական հրապարակումների և այլ ձևաչափերով.

17) գիտակրթական և գիտահետազոտական հաստատությունների, բուհերի, փորձագիտական կենտրոնների հետ համագործակցությունը՝ համատեղ հետազոտությունների իրականացման, փորձագիտական գիտելիքների փոխանակման և Կենտրոնի հետազոտական կարողությունների զարգացման նպատակով.

18) վիճակագրական վաղ զգուշացման համակարգերի կիրառումը՝ ոչ ստանդարտ աճերի, նոր միտումների կամ ռիսկերի վաղ հայտնաբերման և համապատասխան կանխարգելիչ արձագանքի պլանավորումը ապահովելու նպատակով.

19) հանցավորության վերաբերյալ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ կանխատեսումների իրականացումը.

20) հանցավորության առաջնային ռիսկերի ու սպառնալիքների բացահայտումը, գնահատումը և տարածական քարտեզագրումը.

21) հանցավորության հիմնական երկարաժամկետ սպառնալիքների գնահատումը, դրա հիման վրա սպառնալիքների գնահատման պարբերական զեկույցի մշակումը և հրապարակումը.

22) Կենտրոնի իրավասության ոլորտին առնչվող քննարկումներին, խորհրդակցություններին, միջոցառումներին և այլ աշխատանքային հանդիպումներին մասնակցության ապահովումը.

23) բաժնի գործառույթներին վերաբերելի կառավարչական բնույթի հրամանների, ցուցումների և այլ նախագծերի մշակումը և ներկայացումը հաստատման.

24) այլ իրավական ակտերով սահմանված գործառույթների իրականացումը:

29. Նորարարության և ռազմավարական կանխատեսումների բաժինն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) կիրառվող թվային հարթակի, վերլուծական և արհեստական բանականության գործիքների մոնիթորինգը, արդյունավետության ու հուսալիության գնահատումը, խնդիրների ու թերությունների վերհանումը ու դրանց հասցեագրումը.

2) հանցավորության դեմ պայքարի ռազմավարական պլանավորման համար վերլուծական գործիքների մշակումը.

3) արհեստական բանականության և առկա թվային այլ նորարարական գործիքների փորձարկումը և ներդրումը.

4) Կենտրոնի աշխատողների կողմից թվային գործիքների կիրառման ընթացքի, որակի, թիրախայնության նկատմամբ վերահսկողությունը, թվային գործիքների կիրառման որակի բարձրացմանը ուղղված քայլերի իրականացումը, այդ թվում՝ թվային գործիքների կիրառման հետ կապված մեթոդական աջակցության և մասնագիտական խորհրդատվության տրամադրումը.

5) հանցավորության տարածման, զարգացման և փոփոխության սցենարների մշակումը, դրանց արդյունքների տրամադրումը իրավասու կառուցվածքային ստորաբաժանումներին.

6) կանխատեսման և մոդելավորման ալգորիթմների և մեթոդաբանությունների մշակումը և կիրառումը.

7) Կենտրոնի թվային ենթակառուցվածքի արդիականության ապահովումը՝ առաջարկելով տեխնոլոգիական բարելավումներ.

8) Կենտրոնի իրավասության ոլորտին առնչվող քննարկումներին, խորհրդակցություններին, միջոցառումներին և այլ աշխատանքային հանդիպումներին մասնակցության ապահովումը.

9) բաժնի գործառույթներին վերաբերելի կառավարչական բնույթի հրամանների, ցուցումների և այլ նախագծերի մշակումը և ներկայացումը հաստատման.

10) այլ իրավական ակտերով սահմանված գործառույթների իրականացումը:»